



« ..... » ..... 201 թ.

..... / .....

ՀՐԱՄԱՆ N 387-Ա

17 դեկտեմբերի 2014թ.

ք. Երևան

**«ՄԵՐ ՄԵԾԵՐԸ» ԽՈՐԱԳՐՈՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ  
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻՆ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՀԱՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 11-ի N1049-Ն որոշման N1 հավելվածի 13-րդ կետի 4-րդ ենթակետով՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ**

1. «Մեր մեծերը» խորագրով մշակութային միջոցառումների շրջանակներում 2015 թվականի ծրագրում ընդգրկել Դանիել Վարուժանի, Համաստեղի, Անդրանիկ Օզանյանի, Փանոս Թերլեմեզյանի և Միսիոներներ-արդարների անունները:

2. Սույն հրամանի կատարման պատասխանատու ստորաբաժանում սահմանել Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության աշխատակազմի համահայկական ծրագրերի վարչությունը:

3. Սույն հրամանի կատարման պատասխանատու ստորաբաժանմանը՝ մշակել և ներկայացնել «Մեր մեծերը» խորագրով մշակութային միջոցառումների շրջանակներում 2015 թվականի միջոցառումների ցանկը և ընդգրկված անհատների մասին տեղեկատվական-ճանաչողական նյութերը:

Հիմք՝ Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության աշխատակազմի համահայկական ծրագրերի վարչության պետ Ա. Անդրեասյանի զեկուցագիրը:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարի տեղակալ Ս. Սրապիոնյանին:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀՐԱՆՈՒՇ ՀԱԿՈՐՅԱՆ**